ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-6-2-Ա

ք. Երևան 10.07.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հուլիսի 10-ի նիստում քննարկեց 2024 թվականի հոկտեմբերի 18-ին հայտատուի ներկայացուցիչ Պայծառ Քոչարյանի կողմից ներկայացված՝ «Դիջիթէյայ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան, Դեղատան 4, բն. 2, AM) «սնեփ» (No20231366) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 36-րդ դասի «ապահովագրություն դժբախտ պատահարներից. ապահովագրության վիճակագիրների ծառայություններ. անշարժ գույքի վարձույթ. անշարժ գույքի գործակալությունների ծառայություններ. միջնորդություն անշարժ գույքի հետ կապված գործառնություններում. ապահովագրման միջնորդություն. ապահովագրություն. անշարժ գույքի գնահատում. խնամակալական ծառայություններ. անշարժ գույքի կառավարում. բնակելի ֆոնդի կառավարում. ապահովագրություն հրդեհից. բնակարանների վարձույթ. ֆերմաների և գյուղատնտեսական ձեռնարկությունների վարձույթ. առողջության ապահովագրություն. ապահովագրություն դժբախտ պատահարներից ծովում. բորսայական միջնորդություն. կյանքի ապահովագրություն. բնակարանային բյուրոների ծառայություններ (անշարժ գույք). խորհրդատվություն ապահովագրության հարցերով. ապահովագրության հարցերով տեղեկատվության տրամադրում. գրասենյակների վարձույթ (անշարժ գույք). պահեստային (ապահովագրական) ֆոնդերի ծառայություններ. պայմանական ազատվածների համար երաշխավորման ծառայություններ. տարբեր մասնագետների համատեղ աշխատանքի համար գրասենյակների վարձույթ. անշարժ գույքի հետ կապված գործառնություններ. նվերների վկայականների տրամադրում» ծառայություններից և 38-րդ, 39-րդ, 41-րդ, 44-րդ 45-րդ դասերի ծառայություններից բացի, մնացած ծառայությունների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է

շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան, բացի վերը նշված դասերի ծառայություններից, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «Snap» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://conversebank.am/blog/item/snap, https://www.fintech.am/arag-ev-akntartayin-vark-converse-mobile/, https://www.instagram.com/reel/CpChpkUoEdB/ ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու 36-րդ դասի՝ «ֆինանսական հաշվանցում (քլիրինգ), դրամական միջոցների փոխանցում էլեկտրոնային հաշվարկների համակարգով, էլեկտրոնային դրամապանակներով վճարման ծառայություններ» ծառայությունների համար, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագիր հակադրվող ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը ներկա չէր նիստին, սակայն չէր առարկել առանց իր ներկայության բողոքը քննարկելու համար:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայտատուի ներկայացուցիչ Պայծառ Քոչարյանի կողմից ներկայացված «Դիջիթէյայ» ՍՊԸ ընկերության «սնեփ» (No20231366) ապրանքային նշանի գրանցումը

մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցել 36-րդ դասի՝ «ֆինանսական հաշվանցում (քլիրինգ), դրամական միջոցների փոխանցում էլեկտրոնային հաշվարկների համակարգով, էլեկտրոնային դրամապանակներով վճարման ծառայություններ» ծառայությունների համար:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ